

ԱՅՍՊԷՍ ԳԻՆՈՎ...

Այսպէս գիւնով,
Գրոհիւններէն անցնիլ մինակ,
Անցնիլ խրոռով...

Անըպատակ,
Յիմարի պէս, լոյսի մը տակ,
Կենալ ասանկ...

Յետոյ նայիլ
Պատուհանի մը ամրափակ,
Երկար նայիլ...

Մըտիկ ընել
Սրտիդ խորէն նըւագն ընտել,
Յանգիլ անել...

Հետքիդ վըրայ
Ետ դառնալ լուռ, դէզ, գլխահակ,-
Գիշերէ սա'...

Այսպէս գիւնով,
Հայիոյեղով անցնիլ մինակ,
Լըռել քէնով...

Տ Ա Կ Ա Ի Ի Ն

Լըջութիւն չունեցայ տակաւին.-
Թեքել շա՛տ՝
Ծիտի պէս, կը քառի՛մ, կը քռի՛մ
Անընդհատ:

Տակաւին չունիմ յարկ սեպհական,
Ուր ինծի
Ըսպասէ հոգի մը աղուական,
Կանացի...

Տակաւին ես նոյնն եմ,- մեծ տըղայ
Անըզգաստ,
Որ անխոնջ՝ երազին կը բանայ
Առագաստ...

Մինչ - ո՛վ Տէր - կը ձիւնէ գլխուս
Վրայ...:

ՎԱՐՈՒԺՆԱԿ

Հալէս